

Մանդելլ-Ֆլեմինգի մոդելը. բաց տնտեսության մակրոտնտեսագիտություն

Մակրոտնտեսական քաղաքականությունը հետապնդում է միաժամանակ և՛ ներքին, և՛ արտաքին հավասարակշռության հասնելու նպատակ: Ներքին հավասարակշռությունը ենթադրում է տնտեսության կայուն աճ, որն ուղեկցվում է ցածր գործազրկության մեջ և ցածր գնաճով: Իսկ արտաքին հավասարակշռությունը ենթադրում է ընթացիկ հաշվի հաշվեկշռվածություն:

Մանդելլ-Ֆլեմինգի (ՄՖ) մոդելը նկարագրում է մակրոքաղաքականության միջոցով մակրոտնտեսական հավասարակշռության հասնելու մեխանիզմը: Առավել որոշակի՝ ՄՖ մոդելը դիտարկում է տոկոսադրույքի և ազգային եկամտի կախիկությունը՝ կախված կապիտալի հոսքերի և փոխարժեքի ճկունության աստիճանից:

ՄՖ մոդելը Ջոն Խիքսի IS-LM մոդելի բաց տնտեսության տարբերակն է, որը միմյանցից անկախ մշակել են Ռոբերտ Մանդելլը (Mundell, 1962, 1963) և Ջեյմս Ֆլեմինգը (Fleming, 1962):

Մոդելի առանցքային եզրահանգումներից մեկը «անհամատեղելի (կամ անսուբ) երրորդությունն» է, ըստ որի, երբ (1) կապիտալի հոսքը կատարյալ է, ապա երկիրը չի կարող միաժամանակ և՛ (2) ֆիքսել փոխարժեքը և՛ (3) վարել հայեցողական մոնետար քաղաքականություն: Այսինքն՝ երբ ֆինանսական շուկաները լիովին ինտեգրված են, և կապիտալի հոսքը կատարյալ է, ապա երկիրը պետք է ընտրություն կատարի կամ փոխարժեքը ֆիքսելու, կամ հայեցողական մոնետար քաղաքականություն վարելու միջև:

Հայեցողական մոնետար քաղաքականությունը թողարկման մակարդակը փոփոխելու նպատակով մոնետար քաղաքականության կիրառումն է: Իսկ ֆինանսական շուկաների լիակատար ինտեգրում հնարավոր է զարգացած տնտեսությունների միջև, քանի որ, երբ տնտեսությունը թերզարգացած է, ապա կառավարությունը որքան էլ ազատականացնի կապիտալի հոսքը, այդ հոսքը կատարյալ չի դառնա:

Մոդելը ելնում է հետևյալ նախապայմաններից.

- Երկիրը փոքր է. այսինքն՝ մնացյալ աշխարհի եկամուտը, գները, տոկոսադրույքը տրված (արտաժին) են:

- Առևտրի արգելքները զրո են: Ուստի՝ տեղական գները հավասար են արտաքինին՝ $p = p^*$: Իսկ քանի որ արտաքին գները տրված են, ապա տեղական գները հաստատուն են:

Վերջինից հետևում է, որ ամբողջական առաջարկը կատարյալ առաձգական (հորիզոնական) է, և ամբողջական պահանջարկի տեղաշարժն ազդում է եկամտի (բայց ոչ՝ գների) վրա: Այս նախապայմանը ենթադրում է, որ մոդելում դիտարկում ենք կախիկ ժամանակաշրջան, որի ընթացքում գները չեն հասցնում արձագանքել ցնցումներին, օրինակ՝ մոնետար ընդլայնմանը: Եկամտի փոփոխությունն իր հերթին ենթադրում է, որ տնտեսությունում ոչ բոլոր ռեսուրսներն են զբաղված:

Շեշտենք՝ մոդելում եկամտի (թողարկման) փոփոխությունը պայմանավորվում է ամբողջական պահանջարկի (բայց ոչ՝ առաջարկի) տեղաշարժով:

Պարզության համար գները նորմալացնում ենք միավորի՝ $p = p^* = 1$, ուստի՝ անվանական և իրական մեծությունները մոդելում իրար հավասար են:

▪ Փոխարժեքի փոփոխության սպասումները ստատիկ են: Այսինքն՝ տնտեսությունում փոխարժեքի փոփոխության սպասումներ չկան, թեպետ փոխարժեքը կարող է փոխվել: Նկատենք, երբ տնտեսությունում կան փոխարժեքի փոփոխության սպասումներ, ապա այդ սպասումներն ինքնին դառնում են փոխարժեքի փոփոխության պատճառ: Օրինակ՝ երբ տնտեսվարողները սպասում են, որ ազգային արժույթն արժեզրկվելու է, ապա իրենց ակտիվները փոխարկում են այլ արժույթների՝ դրանով նպաստելով ազգային արժույթի արժեզրկմանը:

ՄՖ մոդելի երեք բաղադրիչներն են IS, LM և BP կորերը, որոնք բնութագրում են երեք շուկաների հավասարակշռությունը. IS՝ ապրանքների, LM՝ փողի, BP՝ արտարժույթի:

IS ուղիղը, հավասարակշռությունն ապրանքների շուկայում

Ապրանքների շուկան հավասարակշռված է, երբ ապրանքների տեղական թողարկումը՝ Y , հավասար է պահանջարկին՝ Z .

$$Y = Z$$

Իսկ ապրանքների պահանջարկը հավասար է տնային տնտեսությունների սպառման (C), համախառն ներդրումների (I), կառավարության գնումների (G) և արտահանման (X) գումարին՝ հանած ներմուծումը (M).

$$Z \equiv C + I + G + X - M$$

Սպառման, ներդրումների և կառավարության գնումների հանրագումարը՝ $C + I + G$, անվանում ենք ներքին կլանում, իսկ արտահանման և ներմուծման տարբերությունը՝ զուտ արտահանում կամ առևտրային հաշվեկշիռ:

Ապրանքների պահանջարկը ստանալու համար՝ ներքին կլանմանը գումարում ենք արտահանումը, քանի որ տեղական ապրանքների մի մասը գնում են օտարերկրացիները: Միևնույն ժամանակ, ներքին կլանման մի մասը ծախսվում է օտարերկրյա ապրանքների ձեռք բերման վրա, ուստի՝ ներմուծումը հանում ենք:

Պահանջարկի բաղադրիչները

Սպառումը կախված է տնօրինվող եկամտից, ընդ որում կախումը դրական է.

$$C = C(Y - \bar{T}) \quad 0 < C_{Y-T} < 1$$

որտեղ Y եկամուտն է, իսկ \bar{T} հարկերն են:

Շեշտենք՝ ՄՖ մոդելում կիրառվում է քեյնսյան կանխավարկածը, ըստ որի սպառումը կախված է ընթացիկ եկամտից: Ըստ մեկ այլ հանրահայտ կանխավարկածի սպառումը կախված է ոչ թե ընթացիկ, այլ կյանքի ընթացքում ակնկալվող եկամտից, և սպառողը հարթեցնում է իր սպառումը: Դա Միլթոն Ֆրիդմանի «պերմանենտ եկամտի» վարկածն է:

Ներդրումները դրականորեն կախված են եկամտից՝ Y , բացասականորեն՝ տոկոսադրույքից՝ r .

$$I = I(Y, r) \quad 0 < I_Y < 1, \quad I_r < 0$$

Այսպես՝ եկամտի աճի դեպքում տնային տնտեսություններն ընդլայնում են սպառումը, և ձեռնարկությունների վաճառքն աճում է: Իսկ ավելի շատ թողարկելու համար, ավելի շատ ներդրումներ պետք է կատարվեն: Նկատենք, երբ եկամուտը նվազում է, ու ձեռնարկությունների վաճառքը կրճատվում է, ապա արտադրական հզորությունների մի մասը մատնվում է պարապուրդի. արդյունքում՝ ներդրումները կրճատվում են:

Ինչ վերաբերում է տոկոսադրույք-ներդրումներ առնչությանը, ապա մոտեցումը հետևյալն է: Ձեռնարկությունները հնարավոր ներդրումային ծրագրերից ընտրում են նրանք, որոնց իրական եկամտաբերությունը բարձր է կապիտալի ներգրավման իրական տոկոսադրույքից: Իսկ վերջինը հավասար է անվանական տոկոսադրույքի և ակնկալվող գնաճի տարբերությանը: Մեր դեպքում, քանի որ ակնկալվող գնաճը զրո է, ապա իրական տոկոսադրույքը հավասար է անվանականին:

Ու երբ տոկոսադրույքը բարձրանում է, ապա եկամտաբեր ներդրումային ծրագրերի շրջանակը նեղանում է: Արդյունքում՝ ներդրումները կրճատվում են:

Կառավարության գնումները, ինչպես նաև հարկերը մոդելում տրված (արտածին) են: Դա չի նշանակում, թե կառավարության գնումները մոդելում անփոփոխ են: Ճիշտ հակառակը, մոդելի նպատակներից մեկն է՝ պարզել տնտեսության վրա ֆիսկալ քաղաքականության, օրինակ՝ կառավարության գնումների ընդլայնման, ազդեցությունը:

Նշենք, որ կառավարության գնումների ներքո նկատի ունենք իրական գնումները՝ ապրանքների ու ծառայությունների ձեռք բերումը: Եվ մասնավորապես բացառում ենք կառավարության այն ծախսերը, որոնք կապված են տրանսֆերտների, օրինակ՝ կենսաթոշակների, անաշխատունակության կամ մայրության նպաստների հետ: Պատճառն այն է, որ այդ ծախսերը սոսկ հանգեցնում են տնային տնտեսությունների եկամուտների վերաբաշխմանը: Համարում ենք, որ տրանսֆերտները չեն բերում տնտեսության ընդհանուր ծախսերի փոփոխությանը, քանի որ, երբ կառավարությունը մի տնային տնտեսությունից հարկ է գանձում, ու այն իբրև նպաստ տրամադրում է մեկ այլ տնային տնտեսությանը, ապա միայն փոխվում է ծախս կատարող սուբյեկտը:

Արտահանումն ընդհանուր դեպքում կախված է արտերկրի եկամտից (Y^*), տեղական (p) և արտերկրի (p^*) գներից ու փոխարժեքից (ϵ):

$$X = X(Y^*, p, p^*, \epsilon)$$

Երբ արտերկրում եկամուտն աճում է, արտահանման նկատմամբ պահանջարկը նույնպես աճում է: Երբ արտերկրի գներն աճում են կամ ազգային արժույթն արժեզրկվում է, ապա տեղական ապրանքները հարաբերականորեն էժանանում են, և արտահանումն աճում է: Իսկ երբ տեղական ապրանքների գինն է բարձրանում, արտահանումը կրճատվում է:

Ներմուծումն ընդհանուր դեպքում կախված է ազգային եկամտից (Y), տեղական ու արտերկրի գներից և փոխարժեքից:

$$M = M(Y, p, p^*, \epsilon)$$

Ներմուծումը տեղական գներից դրական է կախված, քանի որ դրանց աճի դեպքում ներմուծումը հարաբերականորեն էժանանում է: Դրա փոխարեն ներմուծումը թանկանում և հետևաբար՝ կրճատվում է, երբ արտաքին գներն աճում են կամ ազգային արժույթն արժեզրկվում է: Իսկ ազգային եկամտից ներմուծումը դրական է կախված, քանի որ որքան եկամուտը բարձր է, այնքան ներմուծվող ապրանքների սպառումը մեծ է:

Իրական փոխարժեք

Իրական փոխարժեքը՝ ϵ_r , հավասար է անվանական փոխարժեքի՝ ϵ , և հարաբերական գների արտադրյալին.

$$\epsilon_r = \epsilon \frac{p^*}{p}$$

Հետևաբար՝ անվանական փոխարժեքը, տեղական և արտերկրյա գները կարող ենք փոխարինել մեկ փոփոխականով՝ իրական փոխարժեքով.

$$X = X(Y^*, \epsilon_r^+) \quad M = M(Y, \epsilon_r^-)$$

ՄՖ մոդելում, սակայն, տեղական ու արտերկրյա գները չեն փոխվում: Այդ պատճառով՝ իրական փոխարժեքի փոփոխությունը հավասար է անվանական փոխարժեքի փոփոխությանը: Ուստի՝ իրական փոխարժեքը կարող ենք փոխարինել անվանականով.

$$X = X(Y^*, \epsilon^+) \quad M = M(Y, \epsilon^-)$$

Փոխարժեքը և հարաբերական գինը

Երբ ազգային արժույթն արժեզրկվում է, ապա արտահանումն էժանանում է, ներմուծումը թանկանում է:

Համարենք՝ 1 ուրբին 10 դրամ է, ուսական ներմուծվող 1լ օդու գինը 900 ուրբ. է, հայկական 1կգ ծիրանի գինը 600 դր. է: Տվյալ փոխարժեքով ուսական օդին 9000 դր. է, իսկ հայկական ծիրանը 60 ուրբ. է: Այսինքն՝ 1լ օդին համարժեք է 15կգ ծիրանի, կամ նույնն է՝ առևտրի պայմանները հավասար են 1/15:

Այժմ համարենք՝ դրամն արժեզրկվում է մինչև 12 դրամ/ուրբի: Ներմուծվող ուսական օդին 9000 դր.-ից կդառնա 10800 դր.: Իսկ հայկական ծիրանը ուս սպառողների համար կէժանանա՝ դառնալով 50 ուրբ.: Նոր փոխարժեքով 1լ օդին համարժեք է 18 կգ ծիրանի, և առևտրի պայմանները հավասար են 1/18:

Բնականաբար, էժանանում է ոչ միայն ծիրանը, այլ Հայաստանից Ռուսաստան ողջ արտահանումը: Եվ թանկանում է ոչ միայն օդին, այլ Ռուսաստանից ողջ ներմուծումը:

Այսպիսով՝ ազգային արժույթի արժեզրկման դեպքում արտահանումն էժանանում է, ներմուծումը թանկանում է, և երկրի առևտրի պայմանները վատանում են:

Ավելին, ինչպես քննարկել ենք Մարշալ-Լեոնեթ-Ռոբինսոնի պայմանի վերլուծության ընթացքում, ակնկալելի է, որ ժամանակի ընթացքում էժանացած արտահանումը կընդլայնվի, իսկ թանկացած ներմուծումը կկրճատվի:

Նշենք՝ երբ համարում ենք, որ գների կամ փոխարժեքի փոփոխության դեպքում արտահանումը և ներմուծումը փոխվում են, ապա ընդունում ենք, որ սպառողներն ու արտադրողներն իրականացնում են ծախսերի փոխադրում, օրինակ՝ հարաբերականորեն թանկացած ներմուծումը փոխարինում են տեղական արտադրությամբ:

ՄՖ մոդելում, քանի որ գները հաստատուն են, իսկ արտերկրի եկամուտն արտածին է, ապա արտահանումը և ներմուծումը կարող ենք ներկայացնել հետևյալ կերպ.

$$X = X(\epsilon^+)$$

$$M = M(Y, \epsilon^-)$$

Այսպիսով՝ ազգային եկամտի ընդլայնման դեպքում ներմուծումն աճում է, ուստի՝ զուտ արտահանումը (NX) նվազում է: Իսկ փոխարժեքի աճի (ազգային արժույթի արժեզրկման) դեպքում արտահանումն աճում է, ներմուծումը կրճատվում է, ուստի՝ զուտ արտահանումն ընդլայնվում է (առևտրային հաշվեկշիռը բարելավվում է):

$$NX(\bar{Y}, \bar{\epsilon}^+) = X(\bar{\epsilon}^+) - M(\bar{Y}, \bar{\epsilon}^-)$$

Հիշենք՝ զուտ արտահանումը փոխարժեքից դրական է կախված, երբ Մարշալ-Լեոներ-Ռոբինսոնի (ՄԼՌ) պայմանը տեղի ունի:

Ապրանքների շուկայի հավասարակշռությունը

Պահանջարկի բաղադրիչներն առանձնաբար դիտարկելուց հետո, դրանք ի մի բերենք.

$$Z = C(Y - \bar{T}) + I(\bar{Y}, \bar{r}) + \bar{G} + NX(\bar{Y}, \bar{\epsilon}^+)$$

Հետևաբար՝ ապրանքների շուկայի հավասարակշռության պայմանը հետևյալն է.

$$(17.1) \quad Y = C(Y - \bar{T}) + I(\bar{Y}, \bar{r}) + \bar{G} + NX(\bar{Y}, \bar{\epsilon}^+)$$

Դրանով իսկ՝ ապրանքների շուկայի հավասարակշռությունը կախված է ազգային եկամտից, տոկոսադրույքից, փոխարժեքից, կառավարության գնումներից և հարկերից.

$$(17.2) \quad Y = A(\bar{Y}, \bar{r}, \bar{T}, \bar{G}) + NX(\bar{Y}, \bar{\epsilon}^+)$$

$A(Y, r, \bar{T}, \bar{G})$ ներքին կլանումն է: Համարում ենք, որ կլանման սահմանային հավակածությունը մեկից փոքր է՝ $0 < A_Y < 1$:

Հվ. 17.2 ընդհանուր դիֆերենցելով կարող ենք ստանալ IS ուղղի անալիտիկ տեսքը.

$$\text{երբ } d\epsilon = 0, \text{ ապա } dY = A_Y dY + A_r dr + NX_Y dY$$

$$\Rightarrow \frac{dr}{dY} = \frac{1 - \overbrace{A_Y}^{>0, <1} - \overbrace{NX_Y}^{<0}}{\overbrace{A_r}^{<0}} < 0$$

IS ուղիղն արտահայտում է եկամտի ու տոկոսադրույքի փոխառնչությունը՝ փոխարժեքի տրված մեծության համար՝ $d\epsilon = 0$, երբ ապրանքների շուկան հավասարակշռված է: Քանի որ $dr/dY < 0$, ապա IS ուղիղը վարընթաց է:

Անալիտիկ ներկայացումից զատ, IS ուղիղը կարող ենք դուրս բերել գրաֆիկորեն, ընդ որում և՛ Քեյնսյան խաչի, և՛ ներհոսք-արտահոսք սխեմայի միջոցով:

IS ուղղի դուրս բերումը Քեյնսյան խաչի միջոցով

Գծ. 17.1-ի վերևի գրաֆիկում հորիզոնական առանցքը թողարկումն է, ուղղահայացը՝ պահանջարկը: Կիսորդը բնութագրում է թողարկման և պահանջարկի հավասարությունը: ZZ ուղիղը նկարագրում է հվ. 17.1-ի աջ կողմը՝ պահանջարկի կախվածությունը թողարկումից, նույնն է՝ եկամտից:

ZZ վերընթաց է, քանի որ թողարկման (եկամտի) աճի դեպքում սպառումն ու ներդրումներն ընդլայնվում են: Միևնույն ժամանակ, ընդլայնվում է ներմուծումը, բայց

համարում ենք՝ սպառման ու ներդրումների սահմանային հակվածությունների գումարը մեծ է ներմուծման սահմանային հակվածությունից. $|C_Y + I_Y| > |M_Y|$:


Գծանկար 17-1:

Ապրանքների շուկայի հավասարակշռությունը և IS ուղղի կառուցումը Քեյնսյան խաշի միջոցով

Երբ տոկոսադրույքը r_1 է, ապա թողարկման և պահանջարկի միջև կախվածությունը նկարագրվում է ZZ ուղղով: Ապրանքների շուկայի հավասարակշռություն է e_1 կետում, ուր պահանջարկը հավասար է թողարկմանը:

Երբ տոկոսադրույքը r_1 -ից բարձրանում է r_2 , ներդրումները և հետևաբար՝ պահանջարկը կրճատվում են ($I_r < 0$), ու ZZ ուղիղը տեղաշարժվում է ներքև: Ապրանքների շուկայի վերահավասարակշռություն է e_2 կետում, ուր թողարկումը (եկամուտը) Y_1 -ից կրճատվել է Y_2 :

Հետևաբար՝ ապրանքների շուկայի հավասարակշռությունը առումով տոկոսադրույքի և եկամտի միջև կախվածությունը հակադարձ է, այսինքն՝ IS ուղիղը վարընթաց է:



ZZ-ի թեքությունը պահանջարկի սահմանային հակվածությունն է, որը փոքր է մեկից:

ZZ ուղղի՝ կիսորդի հետ հատման e_1 կետում ապրանքների շուկայի հավասարակշռություն է, քանի որ պահանջարկը հավասարվում է թողարկմանը: e_1 -ից աջ պահանջարկը թողարկումից պակաս է, ուստի՝ արտադրողները թողարկումը կրճատում են, իսկ e_1 -ից ձախ պահանջարկը թողարկումից մեծ է, ուստի՝ արտադրողները թողարկումն ընդլայնում են: Արդյունքում՝ ապրանքների շուկայի հավասարակշռություն է e_1 կետում:

ZZ-ի դիրքը համապատասխանում է տոկոսադրույքի, փոխարժեքի, կառավարության գնումների, հարկերի ու արտերկրի եկամտի տրված արժեքների: Երբ դրանք փոխվում են, ZZ տեղաշարժվում է:

Մասնավորապես, երբ կառավարության գնումներն աճում են կամ հարկերը կրճատվում են, ապա ZZ տեղաշարժվում է վեր, և եկամտի հավասարակշիռ մակարդակը բարձրանում է: Ընդլայնող ֆիսկալ քաղաքականությունը պայմանավորում է եկամտի (թողարկման) աճ:

ZZ վեր է տեղաշարժվում և եկամտն աճում է նաև, երբ ազգային արժույթն արժեզրկվում է, քանի որ այդ դեպքում զուտ արտահանումն ընդլայնվում է:

Իսկ երբ տոկոսադրույքն է բարձրանում, ապա ներդրումները նվազում են, ինչից ընդհանուր պահանջարկը կրճատվում է, և ZZ տեղաշարժվում է ներքև: Նոր հավասարակշռությունը հաստատվում է e_2 կետում, ուր եկամտի հավասարակշիռ մակարդակը նվազել է ($Y_2 < Y_1$):

Տոկոսադրույքի աճը պահանջարկի վրա ազդում է ոչ միայն ներդրումների կրճատման, այլև զուտ արտահանման նվազման միջոցով: Այսպես՝ երբ տոկոսադրույքը բարձրանում է, ապա ազգային արժույթով գնանշված ակտիվները (օրինակ՝ պարտատոմսերը) դառնում են համեմատաբար ավելի գրավիչ, քան արտարժույթով գնանշված ակտիվները (որոնց տոկոսադրույքը չի փոխվել): Տնտեսվարողներն ընդլայնում են ազգային արժույթի նկատմամբ պահանջարկը (որպեսզի ձեռք բերեն այդ արժույթով գնանշված ակտիվները), ինչից ազգային արժույթն արժևորվում է (փոխարժեքը նվազում է): Իսկ արժույթի արժևորման հետևանքով զուտ արտահանումը կրճատվում է:

Այսպիսով, երբ տոկոսադրույքը բարձրանում է, ապա ներդրումները և զուտ արտահանումը նվազում են, ուստի՝ նվազում է թողարկումը (եկամուտը): Այսինքն՝ ապրանքների շուկայի հավասարակշռության տեսանկյունից, տոկոսադրույքի և թողարկման կապը հակադարձ է: Եվ հետևաբար՝ IS ուղիղը, որը նկարագրում է նշյալ կապը, վարընթաց է:

IS ուղիղի դուրս բերումը ներհուք-արտահուք սխեմայի միջոցով

Ապրանքների շուկայի հավասարակշռության պայմանից ունենք, որ.

$$Y = C + I + \bar{G} + X - M$$

Իսկ մասնավոր խնայողությունները՝ S , հավասար են տնօրինվող եկամտի ու սպառման տարբերությանը.

$$S = Y - \bar{T} - C$$

Խնայողությունները պայմանավորող երկու հիմնական գործոններն են եկամուտը և տոկոսադրույքը.

$$S = S(Y, r^+)$$

Որքան եկամուտը բարձր է, այնքան տնային տնտեսություններն ավելի շատ են խնայում: Իր հերթին, որքան տոկոսադրույքը բարձր է, այնքան լրացուցիչ խնայողություններ կատարելու շահագրգռությունը մեծ է:

Վերոնշյալից հետևում է.

$$\underbrace{Y - \bar{T} - C}_S = I + \bar{G} - \bar{T} + X - M \quad \Rightarrow \quad S + M + \bar{T} = I + \bar{G} + X$$

$$\underbrace{S(Y, r) + M(Y, \epsilon) + \bar{T}}_{\text{արտահոսք}} = \underbrace{I(Y, r) + \bar{G} + X(\epsilon)}_{\text{ներհոսք}}$$

Վերջին հավասարման ձախ կողմն արտահոսքում է արտահոսքը, իսկ աջը՝ ներհոսքը: Երբ ներհոսքը հավասար է արտահոսքին, ինչպես, երբ եկամուտը (թողարկումը) հավասար է պահանջարկին, ապա ապրանքների շուկան հավասարակշռված է:

IS ուղիղը դուրս բերենք գրաֆիկորեն ներհուք-արտահոսք սխեմայի միջոցով:


Գծ. 17-2-ի շորրորդ քառորդում պատկերված է արտահոսքի դրական կախվածությունը եկամտից: Երբ եկամուտն աճում է, խնայողություններն ու ներմուծումը աճում են:

Երկրորդ քառորդում պատկերված է ներհոսքի բացասական կախվածությունը տոկոսադրույքից: Երբ տոկոսադրույքը բարձրանում է, ներդրումները և արտահանումը նվազում են:

Երրորդ քառորդում պատկերված կիսորդի միջոցով արտահոսքը հավասարվում է ներհոսքին:

Գծանկար 17-2:

IS ուղղի կառուցումը ներհոսք-արտահոսք սխեմայի միջոցով



Այսպիսով՝ երբ եկամուտը Y_1 է, արտահոսքը w_1 է, որի դեպքում ներհոսքը պետք է կազմի n_1 , որպեսզի ապրանքների շուկան հավասարակշռվի, ինչը հնարավոր է, երբ տոկոսադրույքը r_1 է: Արդյունքում՝ Y_1 եկամտի դեպքում ապրանքների շուկան հավասարակշռվում է, երբ տոկոսադրույքը r_1 է (a կետ): Համանմանորեն որոշվում են IS-ի մնացած կետերը:

Եկամտի և թողարկման ցուցանիշները ՄՖ մոդելում

ՄՖ մոդելում Y արտահայտում է և՛ թողարկումը, և՛ իրական եկամուտը: Այսինքն՝ թողարկված արդյունքը նույնությամբ հավասար է իրական եկամտին:

Ընդհանուր դեպքում առկա են եկամտի երեք ազդեցատային ցուցանիշներ՝ համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ), համախառն ազգային եկամուտը (ՀԱԵ), համախառն ազգային տնօրինվող եկամուտը (ՀԱՏԵ):

ՀՆԱ ներառում է երկրում թողարկված բոլոր վերջնական ապրանքների ու ծառայությունների արժեքը, և հետևաբար՝ երկրում բոլորի (ներառյալ՝ ոչ ռեզիդենտների) ստացած եկամուտը: Այնինչ ՀԱԵ ներառում է միայն ռեզիդենտների ստացած եկամուտը (անկախ նրանից՝ որտեղ է այն ստացվել. երկրում, թե արտերկրում): Այսինքն՝ ոչ ռեզիդենտի երկրում ստացած եկամուտը ՀԱԵ-ում չի ներառվում, բայց ներառվում է ՀՆԱ-ում:

ՀԱԵ-ն հավասար է ՀՆԱ-ի և գործոնային գույք եկամուտների գումարին.

$$\text{ՀԱԵ} = \text{ՀՆԱ} + \text{արտերկրից ստացված եկամուտներ} - \text{արտերկրին վճարված եկամուտներ}$$

$$\Rightarrow \text{ՀԱԵ} = \text{ՀՆԱ} + \text{գույք գործոնային եկամուտներ}$$

Իսկ ՀԱՏԵ հավասար է ՀԱԵ-ի և զուտ տրանսֆերտների գումարին.

$$\begin{aligned} \text{ՀԱՏԵ} &= \text{ՀԱԵ} + \text{արտերկրից ստացված տրանսֆերտներ} \\ &\quad - \text{արտերկրին փոխանցված տրանսֆերտներ} \end{aligned}$$

$$\Rightarrow \text{ՀԱՏԵ} = \text{ՀԱԵ} + \text{զուտ տրանսֆերտներ}$$

ՀԱՏԵ ցույց է տալիս երկրի ռեզիդենտների տնօրինած բոլոր եկամուտները (ներառյալ տրանսֆերտները): Եվ եթե երկրի ռեզիդենտները մնացյալ աշխարհից ստացել են ավելի շատ տրանսֆերտներ, քան փոխանցել են, ապա $\text{ՀԱՏԵ} > \text{ՀԱԵ}$:

Հիշենք, որ վճարային հաշվեկշռի՝ ներկայում կիրառվող տերմիններով գործոնային եկամուտները կոչվում են «առաջնային եկամուտներ», իսկ տրանսֆերտները՝ «երկրորդային եկամուտներ»:

Եկամտի ցուցանիշի հետ կապված է նաև խնայողությունների ցուցանիշը:

Երկրի համախառն խնայողությունները հավասար են.

$$\text{խնայողություն} = \text{ՀԱՏԵ} - \text{հարկեր} - \text{վերջնական սպառման ծախսեր}$$

ՄՖ մոդելում համարում ենք, որ «զուտ գործոնային եկամուտները» և «զուտ տրանսֆերտները» զրո են, այսինքն՝ առևտրային հաշվեկշռը հավասար է ընթացիկ հաշվին, և $\text{ՀՆԱ} = \text{ՀԱԵ} = \text{ՀԱՏԵ}$:

Շեշտենք, որ այս ենթադրությունները մոդելի տեսանկյունից առանցքային չեն: Նույն հաջողությամբ կարող էինք համարել, որ եկամուտները և տրանսֆերտները զրո չեն և ըստ այդմ՝ կառուցել մոդելը: Այդ դեպքում, սակայն, դիտարկվող արտաձին փոփոխականների թիվը կավելանար, թեպետ մոդելի եզրահանգումները էպպես չէին փոխվի:

IS ուղղի տեղաշարժը

IS-ի դիրքը որոշվում է Y-ից և r-ից բացի մնացյալ փոփոխականների արժեքներով, և դրանց փոփոխության դեպքում IS տեղաշարժվում է: Նկատենք՝ Y-ի կամ r-ի փոփոխության դեպքում տեղի է ունենում ուղղով շարժ, և ոչ թե ուղղի շարժ:

$$IS = IS\left(\overset{+}{G}, \overset{-}{T}, \overset{+}{\epsilon}\right)$$

Մասնավորապես՝ IS աջ է տեղաշարժվում ֆիսկալ ընդլայնման դեպքում: Վերջինը կառավարության գնումների աճի կամ հարկերի կրճատման որևէ զուգորդում է: Ներհոսք-արտահոսք սխեմայում կառավարության գնումների աճը նշանակում է ներհոսքի ընդլայնում: Հետևաբար՝ որպեսզի հավասարակշռությունը վերականգնվի, անհրաժեշտ է, որ r-ի յուրաքանչյուր արժեքին համապատասխանի Y-ի ավելի բարձր արժեք (IS-ի աջ տեղաշարժ), ինչը կապահովի արտահոսքի համարժեք ընդլայնում:

IS աջ է տեղաշարժվում նաև ազգային արժույթի արժեզրկման դեպքում (եթե ՄՂԻ պայմանը տեղի ունի): Այսպես՝ արժեզրկման դեպքում զուտ արտահանումը՝ ներհոսքը, ընդլայնվում է: Հետևաբար՝ հավասարակշռությունը կվերականգնվի, եթե IS տեղաշարժվի աջ և ապահովի արտահոսքի համարժեք ընդլայնում:

Ընդհանուր սկզբունքը հետևյալն է՝ որևէ ցնցում, որն ընդլայնում է պահանջարկը, հանգեցնում է IS-ի աջ տեղաշարժին, իսկ որևէ ցնցում, որը կրճատում է պահանջարկը, հանգեցնում է IS-ի ձախ տեղաշարժին:

Անալիտիկորեն նշյալ տեղաշարժերը կարող ենք նկարագրել հվ. 17-1 ընդհանուր դիֆերենցիալ միջոցով.

$$dY = C_{Y-T}dY - C_{Y-T}dT + I_YdY + I_rdr + dG + NX_YdY + NX_\epsilon d\epsilon$$

$$dY = \frac{-C_{Y-T}dT + I_rdr + dG + NX_\epsilon d\epsilon}{1 - C_{Y-T} - I_Y - NX_Y}$$

Ըստ այդմ՝ ֆիսկալ ընդլայնման դեպքում ($dG > 0$ կամ $dT < 0$) տոկոսադրույքի և փոխարժեքի տրված արժեքների համար ($dr = 0, d\epsilon = 0$) եկամուտն աճում է ($dY > 0$), այսինքն՝ IS աջ է տեղաշարժվում:

Համանմանորեն՝ եկամուտն աճում է, երբ ազգային արժույթն արժեզրկվում է՝ $d\epsilon > 0$, և ՄԼՌ պայմանը տեղի ունի. $NX_\epsilon > 0$:

LM ուղիղը. հավասարակշռությունը փողի շուկայում

Փողի շուկան հավասարակշռված է, երբ փողի իրական առաջարկը հավասար է իրական պահանջարկին.

$$\frac{L^d}{P} = L^s(Y, r)$$

Ձախ կողմն արտահայտում է փողի իրական առաջարկը, աջ կողմը՝ իրական պահանջարկը:

Փողի առաջարկը հավասար է (w) շրջանառությունում գտնվող կանխիկի և (r) ցպահանջ ավանդների գումարին:

Առօրյա խոսակցությունում «փողը» հաճախ կիրառվում է որպես եկամտի կամ հարստության հոմանիշ: Արամ Ղանալանյանը իր «Առածանի»-ում (Երևան, 1951թ) վկայում է այս ժողովրդական առածը «Փողատերը օձ կերավ, ասին՝ դեղ ա. քյասիբը կերավ, ասին՝ սոված ա»:

Տնտեսագիտությունում, սակայն, «փողը» սահմանափակ իմաստ ունի: Փողն այն է, ինչը կարող է վճարելու նպատակով հեշտությամբ օգտագործվել գործարքներում:

Կանխիկը մատակարարում է կենտրոնական բանկը (ԿԲ), որի պարզեցված հաշվեկշիռը հետևյալն է.

ԿԲ պարզեցված հաշվեկշիռը

Ակտիվներ	Պարտավորություններ
Կառավարության արժեթղթեր	Կանխիկ
Պաշտոնական պահուստներ	Բանկերի պահուստներ ԿԲ-ում

Իսկ առևտրային բանկերի և բանկային համակարգի պարզեցված հաշվեկշիռները հետևյալն են.

Առևտրային բանկերի պարզեցված հաշվեկշիռը

Ակտիվներ	Պարտավորություններ
Վարկեր	Ավանդներ
Կառավարության արժեթղթեր	
Բանկերի պահուստներ ԿԲ-ում	

Բանկային համակարգի պարզեցված հաշվեկշիռը

Ակտիվներ	Պարտավորություններ
DC - Ներքին վարկավորում	L^u - Փողի առաջարկ
Կառավարության արժեթղթեր	Կանխիկ
Վարկեր	Ավանդներ
R - Պաշտոնական պահուստներ	

Այսպիսով՝ փողի առաջարկը հավասար է ներքին վարկավորման և պաշտոնական պահուստների գումարին.

$$L^u = DC + R$$

Շեշտենք, որ փողի պահանջարկը որոշելիս մեր նպատակը չէ պարզել, թե որքան փող է անձը կամ հասարակությունը ցանկանում տնօրինել: Նման հարցադրումն ինքնին անիմաստ է, քանի որ պատասխանն ակնհայտ է՝ շատ: Դրա փոխարեն մեր նպատակն է պարզել, թե անձը կամ հասարակությունը իր ֆինանսական ակտիվներից որքանն է ցանկանում պահել փողի տեսքով, հաշվի առնելով, որ փողը տոկոս չի բերում, և որքանն է ցանկանում պահել տոկոս բերող արժեթղթերի, օրինակ՝ պարտատոմսերի տեսքով:

Ենթադրենք ինչ-որ մեկի (պետական անբասիր ծառայության արդյունքում կոպեկ-կոպեկ խնայած) ֆինանսական կարողությունը 500 մլրդ դրամ է: Ենթադրենք նաև՝ այդ անբասիր այրը պետք է որոշի՝ որքանը պահել փողի, որքանը պարտատոմսերի տեսքով: Եթե ամբողջը պահի փողի տեսքով, կկորցնի տոկոսը: Իսկ եթե ամբողջը պահի պարտատոմսերի տեսքով, չի կարողանա իր ընթացիկ ծախսերը հոգալ, օրինակ՝ բարեգործություն անել կամ գիրք գնել:

Ուստի՝ հավանական է, որ այդ այրն իր կարողությունը բաշխի այդ երկու ակտիվների միջև: Իսկ թե հատկապես ի՞նչ համամասնությամբ, կախված է երկու գործոնից՝ (ա) գործարքների միջին մակարդակից, որը նա սովորաբար իրականացնում է որոշ ժամանակի (օրինակ՝ մեկ ամսվա) ընթացքում և (բ) տոկոսադրույքից:

Բնական է ակնկալել, որ գործարքների միջին մակարդակը համամասն է եկամտին: Որքան եկամուտները բարձր են, այնքան ընդգրկուն է ապրանքների ու ծառայությունների շրջանակը, որոնց նկատմամբ անձը պահանջարկ է ներկայացնում: Բայց բնական է նաև ակնկալել, որ որքան տոկոսադրույքը բարձր է, այնքան անձն ավելի հակված է իր կարողության զգալի մասը պահել պարտատոմսերի (և ոչ թե փողի) տեսքով:

Տնտեսությունում փողի ընդհանուր պահանջարկը անհատական պահանջարկների գումարն է: Հետևաբար՝ փողի ընդհանուր պահանջարկը կախված է եկամտից ու տոկոսադրույքից.

$$L^u = L(Y, r^+)$$

Այսպիսով, փողի շուկան հավասարակշռվում է երբ.

$$L^u = L^q \Rightarrow DC + R = L(Y, r)$$

Վերջինն էլ հենց LM ուղղի հավասարումն է, ըստ որի.


$$dDC + dR = L_Y dY + L_r dr \Rightarrow dY = \frac{dDC + dR - L_r dr}{L_Y}$$

Այսինքն՝ տրված տոկոսադրույքի դեպքում եկամուտն աճում է (LM աչ է տեղաշարժվում), երբ ԿԲ իրականացնում է մոնետար ընդլայնում (բաց շուկայի գործարքների միջոցով ընդլայնում է ներքին վարկավորումը) կամ երբ ԿԲ ընդլայնում է պաշտոնական պահուստները (ազգային արժույթի արժևորում թույլ չտալու համար գնում է արտարժույթ՝ դիմացը վաճառելով ազգային արժույթ, որի դեպքում ներքին վարկավորումը, դարձյալ, ընդլայնվում է): Նկատենք նաև՝ LM վերընթաց է.

$$\frac{dr}{dY} = -\frac{L_Y}{L_r} > 0 \quad \text{քանի որ } L_r < 0, L_Y > 0$$

Փողի պահանջարկը տնտեսագիտության առավել հաճախ քննարկված թեմաներից է: Քեյնսն իր հայտնի գրքի 13-րդ գլխում (Keynes, 1936) տարբերակում է փողի նկատմամբ պահանջարկի երեք շարժառիթ՝ (1) գործարքային, (2) նախազգուշական և (3) սպեկուլյատիվ:

Գծանկար 17-3:
LM ուղղի կառուցումը



Հետագայում Մոդիլիանին (Modigliani, 1944) առաջարկեց երկու շարժառիթների՝ գործարքային և ակտիվային, տարանջատումը: Վերը ներկայացվածը համահունչ է Մոդիլիանի առաջարկած սխեմային՝ այն տարբերությամբ, որ Մոդիլիանին $L(Y, r)$ ներկայացնում է իբրև ադիտիվ ֆունկցիա, ըստ որի.

$$L^q = L(Y) + L(r)$$

որտեղ $L(Y)$ գործարքային պահանջարկն է, $L(r)$ ակտիվային պահանջարկն է:

Երբ փողի պահանջարկը ներկայացնում ենք իբրև երկու բաղադրիչների գումար, որոնցից մեկը կախված է եկամտից, մյուսը՝ տոկոսադրույքից, ապա LM կարելի է դուրս բերել (ոչ թե սոսկ ներկայացնել) գրաֆիկորեն (գծ. 17-3):

Չորրորդ քառորդում պատկերված է փողի գործարքային պահանջարկի՝ եկամտից ուղիղ կախվածությունը:

Երրորդ քառորդում պատկերված է փողի առաջարկը (որը մոդելում արտածին է և որոշվում է ԿԲ-ի կողմից), և այդ առաջարկի բաշխումը գործարքային պահանջարկի և ակտիվային պահանջարկի միջև:

Երկրորդ քառորդում պատկերված է փողի ակտիվային պահանջարկի՝ տոկոսադրույքից հակադարձ կախվածությունը:

Y_1 եկամտի դեպքում փողի գործարքային պահանջարկը $L(Y)_1$ է: Փողի առաջարկի տրված L^b մակարդակի դեպքում փողի շուկան հավասարակշռվում է, եթե ակտիվային պահանջարկը $L(r)_1$ է ($L(r)_1 = L^b - L(Y)_1$): Իսկ ակտիվային պահանջարկը $L(r)_1$ է, եթե տոկոսադրույքը r_1 է: Արդյունքում՝ Y_1 եկամտի դեպքում փողի շուկան հավասարակշռվում է, երբ տոկոսադրույքը r_1 է (Ա կետ): Համանմանորեն որոշվում են LM-ի մնացած կետերը:

LM ուղղի տեղաշարժը

LM վերընթաց է, քանի որ եկամտի աճի դեպքում փողի գործարքային պահանջարկն ընդլայնվում է, իսկ փողի տրված առաջարկի դեպքում, որպեսզի փողի շուկայի հավասարակշռությունը պահպանվի, անհրաժեշտ է, որ փողի ակտիվային պահանջարկը կրճատվի, ինչը հնարավոր է տոկոսադրույքի աճի դեպքում:

LM աջ է տեղաշարժվում, երբ ԿԲ ընդլայնում է փողի առաջարկը: Այսպես՝ փողի շուկայի հավասարակշռման համար առաջարկի աճի դեպքում անհրաժեշտ է, որ պահանջարկը նույնպես ընդլայնվի: Իսկ դա հնարավոր է, եթե եկամուտն աճում է (այդ դեպքում փողի գործարքային պահանջարկն ընդլայնվում է), կամ էլ տոկոսադրույքը նվազում է (այդ դեպքում փողի ակտիվային պահանջարկն աճում է):

BP ուղիղը. հավասարակշռությունը արտարժույթի շուկայում

Արտարժույթի շուկան հավասարակշռվում է, երբ վճարային հաշվեկշիռն է հավասարակշռվում, այսինքն՝ երբ ընթացիկ հաշիվը (CA) հավասար է կապիտալի և ֆինանսական հաշիվին (K)։

$$CA + K = 0$$

Հիշենք, որ վճարային հաշվեկշիռը (ա) ընթացիկ հաշիվ, (բ) կապիտալի ու ֆինանսական հաշիվի (այսուհետ՝ կապիտալի հաշիվ), և (գ) պաշտոնական պահուստների փոփոխության՝ dR , հանրագումարն է.

$$CAB + K + dR = 0$$

Բայց երբ արտարժույթի շուկան հավասարակշռված է, ապա ԿԲ-ն արտարժույթ գնելու կամ վաճառելու պատճառ չունի, և ԿԲ-ի պաշտոնական պահուստները չեն փոխվում՝ $dR = 0$: Այդ դեպքում ընթացիկ հաշիվը հակառակ նշանով հավասար է կապիտալի

հաշվին՝ $CA = -K$: Մասնավորապես, եթե ընթացիկ հաշիվը բացասական է (արտահանումը ներմուծումից փոքր է), ապա կապիտալը համարժեք չափով ներհոսում է: Իսկ եթե ընթացիկ հաշիվը դրական է, կապիտալը համարժեք չափով արտահոսում է:

Ընթացիկ հաշիվը ՄՖ մոդելում կախված է եկամտից ու փոխարժեքից (հիշենք՝ մոդելում համարում ենք, որ ընթացիկ հաշիվը հավասար է առևտրային հաշվեկշռին, և ՄԼՌ պայմանը տեղի ունի. $X_\epsilon - M_\epsilon > 0$).

$$CA(\bar{Y}, \bar{\epsilon}) = X(\bar{\epsilon}) - M(\bar{Y}, \bar{\epsilon})$$

Կապիտալի հոսքը կախված է ներքին (r) և արտաքին (r^*) տոկոսադրույքների տարբերությունից: Մասնավորապես, երբ այդ տարբերությունը դրական է ($r > r^*$), ապա կապիտալը ներհոսում է ($K > 0$), իսկ երբ բացասական է ($r < r^*$), ապա կապիտալն արտահոսում է ($K < 0$): Այսինքն՝ որքան տոկոսադրույքների տարբերությունը մեծ է, այնքան կապիտալի ներհոսքը մեծ է (արտահոսքը փոքր է).

$$K = K(r - r^*)$$

Կապիտալի ներհոսքը նշանակում է, որ երկիրը մնացյալ աշխարհին ֆինանսական ակտիվներ վաճառում է ավելի շատ, քան մնացյալ աշխարհից գնում է (այդ դեպքում երկիրը զուտ վարկառու է):

Այսպիսով՝ վճարային հաշվեկշիռը հավասարակշռվում է, եթե

$$X(\bar{\epsilon}) - M(\bar{Y}, \bar{\epsilon}) + K(r - r^*) = dR = 0$$

$$X_\epsilon d\epsilon - M_Y dY - M_\epsilon d\epsilon + K_{r-r^*} dr = 0 \quad \Rightarrow \quad dY = \frac{(X_\epsilon - M_\epsilon)d\epsilon + K_{r-r^*} dr}{M_Y}$$

Գրաֆիկորեն վճարային հաշվեկշռի հավասարակշռությունը պատկերում ենք BP ուղղի միջոցով: BP-ն արտահայտում է Y -ի և r -ի բոլոր զուգորդումները, որոնց դեպքում վճարային հաշվեկշիռը (արտարժույթի շուկան) հավասարակշռված է:

Արժեզրկման դեպքում ($d\epsilon > 0$) BP աջ է տեղաշարժվում (եթե ՄԼՌ պայմանը տեղի ունի): Նկատենք նաև, որ BP վերընթաց է՝ $\frac{dr}{dY} = \frac{M_Y}{K_{r-r^*}} > 0$:

Կապիտալի հոսքերի համար կարող ենք տարբերակել երեք վիճակ.


ա. Կատարյալ անշարժ. $K_r = 0$: Այսինքն՝ կապիտալի հոսքերը տոկոսադրույքի փոփոխությանը չեն արձագանքում: Այս ծայրահեղ դեպքում BP-ն ուղղահայաց է:

բ. Կատարյալ շարժում. $K_r \rightarrow \infty$: Այս դեպքում, եթե ներքին տոկոսադրույքը տարբերվում է արտաքինից ($r \neq r^*$), ապա կապիտալը անսահմանափակ ծավալով տեղաշարժվում է, այնքան մինչև տոկոսադրույքները հավասարվեն: Մասնավորապես, եթե $r > r^*$, ապա կապիտալը ներհոսում է, իսկ հակառակ դեպքում արտահոսում է: Այսպիսով՝ երբ կապիտալը կատարյալ շարժուն է, ապա կապիտալի շուկայում արբիտրաժի շնորհիվ $r = r^*$: Այս ծայրահեղ դեպքում BP-ն հորիզոնական է:

գ. Անկատար շարժում. $0 < K_r < \infty$: Այս դեպքում, երբ ներքին և արտաքին տոկոսադրույքները տարբեր են, ապա կապիտալը տեղաշարժվում է, բայց ոչ այն ծավալով, որ տոկոսադրույքները հավասարվեն: Հավասարակշռությունում տոկոսադրույքները տարբեր են. $r - r^* \neq 0$, իսկ գրաֆիկորեն BP-ն վերընթաց է:

BP ուղղի կառուցումը ներկայացված է գծ. 17-4-ում:

Գծանկար 17-4:
BP ուղղի կառուցումը



Չորրորդ քառորդում պատկերված է ընթացիկ հաշվի կախվածությունը եկամտից: Ցածր եկամտի դեպքում ընթացիկ հաշիվը դրական է, քանի որ ներմուծումը փոքր է: Եկամտի աճին զուգընթաց ներմուծումն աճում է, և ընթացիկ հաշվի ավելցուկը կրճատվում է (պակասորդն աճում է):

Երկրորդ քառորդում պատկերված է կապիտալի հաշվի ու տոկոսադրույքի կախվածությունը: Որքան ներքին տոկոսադրույքը բարձր է, այնքան կապիտալի ներհոսքը մեծ է (արտահոսքը փոքր է):

Երրորդ քառորդում կիսորդի միջոցով պատկերված է ընթացիկ հաշվի և կապիտալի հաշվի հավասարությունը: Երբ ընթացիկ հաշիվը բացասական է, կապիտալը նույն չափով ներհոսում է, իսկ երբ ընթացիկ հաշիվը դրական է, կապիտալը նույն չափով արտահոսում է:

Այսպիսով, երբ եկամուտը Y_1 է, ընթացիկ հաշվի մնացորդը CA_1 է, և որպեսզի կապիտալի հոսքը լինի նույնքան՝ $|K_1| = |CA_1|$, անհրաժեշտ է, որ տոկոսադրույքը լինի r_1 : Արդյունքում՝ Y_1 եկամտի ու r_1 տոկոսադրույքի դեպքում արտարժույթի շուկան հավասարակշռվում է (a կետում): Համանմանորեն որոշվում են BP-ի մնացած կետերը:

BP ուղղի թեքությունը և տեղաշարժը


BP վերընթաց է, քանի որ եկամտի աճի դեպքում ընթացիկ հաշվի պակասորդն աճում է, ինչը հակակշռելու համար անհրաժեշտ է կապիտալի ներհոսքի աճ, որն էլ հնարավոր է ավելի բարձր տոկոսադրույքի դեպքում:

BP-ից ձախ (գծ. 17-5) վճարային հաշվեկշիռն ավելցուկով է՝ $CA + K > 0$, քանի որ կապիտալի տրված հոսքի համար ընթացիկ հաշվի ավելցուկը ավելի մեծ է (պակասորդն ավելի փոքր է): Եվ հակառակը՝ BP-ից աջ վճարային հաշվեկշիռը պակասորդով է՝ $CA + K < 0$, քանի որ ընթացիկ հաշվի տրված մնացորդի համար կապիտալի ներհոսքն ավելի փոքր է (արտահոսքն ավելի մեծ է):

Գծանկար 17-5:

Արտարժույթի շուկայի հավասարակշռությունը

BP ուղղի վրա վճարային հաշվեկշիռը հավասարակշռված է: Ուղղից աջ վճարային հաշվեկշիռը պակասորդով է: Իսկ ուղղից ձախ վճարային հաշվեկշիռն ավելցուկով է:



Որքան կապիտալը շարժուն է, այսինքն՝ որքան կապիտալի տեղական և միջազգային շուկաները ինտեգրված են, այնքան BP հարթ է: Այսպես, երբ BP համեմատաբար հարթ է (կապիտալը շարժուն է), ապա եկամտի տրված աճի դեպքում (որից ընթացիկ հաշիվը վատանում է) տոկոսադրույքն ավելի փոքր շափով պետք է աճի, որպեսզի կապիտալի հավասարակշռող ներհոսք ապահովի:

Ազգային արժույթի արժեզրկման դեպքում BP տեղաշարժվում է աջ (եթե ՄԱՌ պայմանը տեղի ունի), քանի որ զուտ արտահանումն աճում է, ու հետևաբար՝ եկամուտը պետք է աճի, որպեսզի ներմուծման աճի միջոցով հակակշռի զուտ արտահանման աճը:


Մոդելի հավասարակշռությունը

Գրաֆիկորեն մոդելը հավասարակշռվում է, երբ երեք ուղիղները հատվում են միևնույն կետում (գծ. 17-6): Այդ դեպքում ապրանքների, փողի և արտարժույթի շուկաները միաժամանակ հավասարակշռվում են: Բայց այդ կետին համապատասխանող եկամտի մակարդակը թեպետ հավասարակշիռ է (ամբողջական պահանջարկը հավասար է ամբողջական առաջարկին), սակայն կարող է լինել ավելի ցածր (կամ բարձր) լրիվ զբաղվածությանը համապատասխանող եկամտի մակարդակից: Այսպես՝ գծ. 17-6-ում եկամտի հավասարակշիռ Y_1 մակարդակը ցածր է լրիվ զբաղվածության Y_f մակարդակից:

Գծանկար 17-6:

Մանդել-Ֆլեմինգի մոդելի հավասարակշռությունը

e կետում ապրանքների, փողի և արտարժույթի շուկաները հավասարակշռված են: Սակայն եկամտի հավասարակշիռ Y_1 մակարդակը ցածր է լրիվ զբաղվածությանը համապատասխանող Y_f մակարդակից:



Երբ BP ուղիղը IS և LM ուղիղների հատման կետով չի անցնում, ապա արտարժույթի շուկան հավասարակշռված չէ: Շեշտենք, որ ապրանքի ու փողի շուկաները մոդելում մշտապես հավասարակշռված են, ինչը տեղի է ունենում IS և LM ուղիղների հատման կետում:


Գծ. 17-7ա-ում IS և LM ուղիղները հատվում են BP-ից աջ, ուստի՝ ապրանքի ու փողի շուկաների հավասարակշռության e կետում վճարային հաշվեկշիռը պակասորդով է, և

տնտեսությունում առկա է արժեզրկման ճնշում: Իսկ գծ. 17.7բ-ում e կետը BP-ից ձախ է, ուստի՝ վճարային հաշվեկշիռն ավելցուկով է, և տնտեսությունում առկա է արժևորման ճնշում:


Գծանկար 17-7:

Ապրանքի և փողի շուկաները հավասարակշռված են e կետում, բայց արտարժույթի շուկան անհավասարակշիռ է:

(ա) վճարային հաշվեկշիռը պակասորդով է, քանի որ IS և LM ուղիղները հատվում են BP-ից աջ:



(բ) վճարային հաշվեկշիռը ավելցուկով է, քանի որ IS և LM ուղիղները հատվում են BP-ից ձախ:



Մակրոտնտեսական քաղաքականության ազդեցությունը

Մոնետար ֆաղափականության նպատակը մոդելում եկամտի մակարդակի վրա ներգործելն է՝ փողի առաջարկը փոփոխելու միջոցով:

Երբ Y_F հետապնդում է եկամտի (թողարկման) մակարդակը բարձրացնելու նպատակ, ապա ընդլայնում է փողի առաջարկը և կրճատում է տոկոսադրույքը (գծ. 17-8): Փողի առաջարկն ընդլայնելու տարբերակներից մեկը պարտատոմսերի գնումն է, ինչը բարձրացնում է պարտատոմսերի գինը և հետևաբար՝ կրճատում է տոկոսադրույքը: Ցածր տոկոսադրույքի շնորհիվ ներդրումներն ընդլայնվում են, ինչն էլ բազմաթիվ էֆեկտով ազդում է թողարկման (եկամտի) վրա:

Սակայն եկամտի աճը բացասաբար է ազդում ընթացիկ հաշվի վրա, իսկ տոկոսադրույքի կրճատման հետևանքով կապիտալն արտահոսում է: Այդ պատճառով՝ մոնետար ընդլայնումը վատացնում է վճարային հաշվեկշիռը: Մոնետար ընդլայնման դեպքում LM տեղաշարժվում է աջ:


Ֆիսկալ ֆաղափականության նպատակը, նույնպես, եկամտի մակարդակի վրա ներգործելն է՝ կառավարության ծախսերը կամ հարկերը փոփոխելու միջոցով: Ընդ որում, երբ կառավարությունը հետապնդում է եկամտի մակարդակը բարձրացնելու նպատակ, ապա ընդլայնում է ծախսերը և կամ կրճատում է հարկերը: Համարում ենք, որ ծախսերի

աճը կառավարությունը ֆինանսավորում է պարտատոմսերի վաճառքի (ներքին պարտքի ընդլայնման) միջոցով:

Կառավարության ծախսերի աճը բազմարկչի էֆեկտով ընդլայնում է թողարկումը (եկամուտը): Սակայն պարտատոմսերի վաճառքը կրճատում է դրանց գինը և բարձրացնում է տոկոսադրույքը: Վերջինը բացասաբար է ազդում ներդրումների վրա (դուրս մղման էֆեկտ) և մասամբ արգելակում է եկամտի ընդլայնումը:

Գծանկար 17-8:

Մոնետար ընդլայնումը ֆիքսված փոխարժեքի դեպքում



Ֆիսկալ ընդլայնման ազդեցությունը վճարային հաշվեկշռի վրա միարժեք չէ: Եկամտի աճը ընթացիկ հաշվի վրա բացասաբար է ազդում, բայց տոկոսադրույքի աճը նպաստում է կապիտալի ներհոսքին: Հետևաբար, եթե կապիտալի զուտ ներհոսքը գերազանցում է ընթացիկ հաշվի պակասորդին, ապա վճարային հաշվեկշիռը բարելավվում է: Հակառակ դեպքում՝ վատանում է:

Նկատենք, երբ ֆիսկալ ընդլայնումը ֆինանսավորվում է պարտատոմսերի վաճառքի միջոցով, ապա տնտեսությունում փողի առաջարկը չի փոխվում, քանի որ պարտատոմսերի վաճառքից ստացված փողը կառավարությունը ծախսերի միջոցով ներարկում է տնտեսություն:

Ֆիսկալ ընդլայնման դեպքում IS տեղաշարժվում է աջ:

Արտարժույթային ներխուժումը ԿԲ իրականացնում է արտարժույթի շուկան հավասարակշռելու նպատակով: Երբ կապիտալի ներհոսքը բավարար չէ ընթացիկ հաշվի պակասորդը հակակշռելու համար, ինչի հետևանքով արտարժույթի պահանջարկը գերազանցում է առաջարկին, ապա ազգային արժույթի արժեզրկումը կանխելու համար ԿԲ կարող է վաճառել արտարժույթ:

Քանի որ ԿԲ արտարժույթը վաճառում է ազգային արժույթի դիմաց, ապա արտարժույթային ներխուժման հետևանքով փողի առաջարկը կրճատվում է (LM կտեղաշարժվի ձախ): Միևնույն ժամանակ, ԿԲ կարող է համարժեք շահով ընդլայնել փողի առաջարկը. այդ դեպքում կասենք՝ ԿԲ ստեղծելուց արտարժույթային ներխուժումը (LM չի տեղաշարժվի ձախ): Հակառակ դեպքում կասենք՝ ԿԲ չստեղծելուց արտարժույթային ներխուժումը:

Մակրոքաղաքականությունը ֆիքսված փոխարժեքի դեպքում, երբ կապիտալի շարժը կատարյալ չէ

Հիշենք՝ երբ կապիտալի շարժը կատարյալ չէ, ապա BP ուղիղը վերընթաց է: Դիտարկենք մոնետար և ֆիսկալ քաղաքականությունների ազդեցությունը տնտեսության վրա, երբ ԿԲ վարում է ֆիքսված փոխարժեքի քաղաքականություն:

Մոնետար ընդլայնում

Տնտեսության սկզբնական հավասարակշռությունը գծ. 17-8-ում e_1 կետում է: Եկամտի մակարդակը բարձրացնելու նպատակով ԿԲ իրականացնում է մոնետար ընդլայնում: LM ուղիղը տեղաշարժվում է աջ, եկամտուն աճում է, տոկոսադրույքը՝ նվազում, վճարային հաշվեկշիռը դառնում է պակասորդային: Վերջինը նշանակում է՝ արտարժույթի պահանջարկը գերազանցում է առաջարկին:

Քանի որ ԿԲ վարում է ֆիքսված փոխարժեքի քաղաքականություն, ապա ազգային արժույթի արժեզրկումը կանխելու համար պետք է արտարժույթային ներխուժում կատարի: Բայց այդ դեպքում փողի առաջարկը կկրճատվի, և LM կտեղաշարժվի ձախ՝ դեպի նախկին մակարդակ:

Եթե ԿԲ ստերիլացնի, ապա LM ուղիղը կմնա LM_2 մակարդակում, բայց վճարային հաշվեկշռի պակասորդը կպահպանվի: Բայց այդ դեպքում ԿԲ պետք է շարունակի արտարժույթային ներխուժումները՝ արժեզրկումը կանխելու և փոխարժեքը ֆիքսված պահելու համար: Սակայն արտարժույթային ներխուժումները չեն կարող անվերջ շարունակվել, քանի որ միջազգային պահուստները սահմանափակ են:

Միջազգային պահուստները աշխարհում

ՀՀ ԿԲ միջազգային պահուստները 2017 թ-ի նոյեմբերին \$2.2 մլրդ էին:


Միջազգային պահուստներով աշխարհում բացարձակ առաջատարը Չինաստանն է՝ \$3,108 մլրդ, հաջորդում են Ճապոնիան՝ \$1,266 մլրդ, Շվեյցարիան՝ \$795 մլրդ, Սաուդիան Արաբիան՝ 485 մլրդ, Թայվանը՝ 450 մլրդ, Ռուսաստանը՝ 430 մլրդ, Հնդկ Կոնգը՝ 419 մլրդ:

Ու երբ ԿԲ ստերիլացնում է և պնդաճակատորեն հավատարիմ է մնում փոխարժեքը ֆիքսելու քաղաքականությանը, ապա միջազգային պահուստներն արագորեն կրճատվում են: Ինչ-որ պահի ԿԲ հարկադրված կլինի դադարեցնել ստերիլացումը, քանի որ ֆիքսված փոխարժեքի դեպքում մոնետար ֆաղափականությունն արդյունավետ գործիք չէ:

Ֆիսկալ ընդլայնում, երբ կապիտալը նվազ շարժուն է

Մինչ այժմ առանձնացրել ենք կապիտալի շարժունության երեք տարբերակ՝ կատարյալ անշարժ, կատարյալ շարժուն և անկատար շարժուն: Առաջին երկուսը ծայրահեղ տարբերակներ են, երրորդը՝ միջին: Բայց միջին տարբերակը ներառում է չափազանց լայն տիրույթ: Գրաֆիկորեն (գծ. 17-9) այն ընդգրկում է և՛ այն դեպքը, երբ BP հարթ է ու մոտ է կատարյալ շարժունին, և՛ նաև այն դեպքը, երբ BP ուղղաձիգ է ու մոտ է կատարյալ անշարժին: Ուստի՝ նպատակահարմար է տարանջատել «անկատար շարժուն»-ի երկու ենթատարբերակ՝ նվազ շարժուն և առավել շարժուն: Ընդ որում՝ երբ կապիտալը «նվազ շարժուն» է, կհամարենք, որ BP ավելի ուղղաձիգ է, քան LM: Իսկ երբ կապիտալը «առավել շարժուն» է, կհամարենք, որ BP ավելի հարթ է, քան LM:

Գծանկար 17-9:
BP ուղղի դիրքը և կապիտալի
շարժումնությունը



Նախ դիտարկենք այն դեպքը, երբ կապիտալը նվազ շարժուն է:


Գծ. 17-10-ում տնտեսությունը սկզբնապես հավասարակշռված է e_1 կետում: Եկամտի ընթացիկ մակարդակը՝ Y_1 , ցածր է լրիվ զբաղվածության մակարդակից՝ Y_f :

Ռեսուրսների լրիվ զբաղվածության հասնելու համար կառավարությունն իրականացնում է ֆիսկալ ընդլայնում՝ դա ֆինանսավորելով պարտատոմսերի վաճառքով: IS ուղիղը տեղաշարժվում է աջ, եկամտը բարձրանում է, բայց բարձրանում է նաև տոկոսադրույքը: Քանի որ կապիտալը նվազ շարժուն է (BP ուղղաձիգ է), ապա տոկոսադրույքի աճը կապիտալի այնքան ներհոսք չի ապահովում, որ հակակշռի եկամտի աճով պայմանավորված ընթացիկ հաշվի վատացմանը: Արդյունքում՝ վճարային հաշվեկշիռը դառնում է պակասորդային:

Վճարային հաշվեկշռի պակասորդն առաջացնում է ազգային արժույթի արժեզրկման ճնշում: Բայց քանի որ կԲ վարում է ֆիքսված փոխարժեքի քաղաքականություն, ապա արժեզրկումը կանխելու համար կարող է իրականացնել շտաբիլացված արտարժույթային ներխուժում: Այդ դեպքում LM կտեղաշարժվի ձախ, եկամտի մակարդակը կկրճատվի, իսկ տոկոսադրույքն ավելի կբարձրանա:

Արդյունքում՝ ընդհանուր հավասարակշռությունը կվերականգնվի (e_3 կետում), քանի որ եկամտի կրճատումը կբարելավի ընթացիկ հաշիվը, իսկ տոկոսադրույքի աճը կապահովի կապիտալի լրացուցիչ ներհոսք: Նկատենք՝ արտարժույթային ներխուժումը տվյալ դեպքում համարժեք է մոնետար սահմանափակմանը:

Գծանկար 17-10:
Ֆիսկալ ընդլայնումը ֆիքսված
փոխարժեքի դեպքում, երբ կապիտալը
նվազ շարժուն է



Այսպիսով՝ ֆիքսված փոխարժեքի և նվազ շարժուն կապիտալի դեպքում, երբ կառավարությունն իրականացնում է ֆիսկալ ընդլայնում, ապա ներքին և արտաքին

հավասարակշռությունը վերականգնելու համար ԿԲ պետք է իրականացնի մոնետար սահմանափակում:


Ֆիսկալ ընդլայնում, երբ կապիտալն առավել շարժուն է

Երբ կապիտալն առավել շարժուն է, և կապիտալի հոսքերը նշանակալի չափով արձագանքում են տոկոսադրույքի փոքր փոփոխություններին, ապա ֆիսկալ ընդլայնումը հանգեցնում է վճարային հաշվեկշռի ավելցուկին (գծ. 17-11):

Սկզբնական հավասարակշռությունը e_1 կետում է, և ֆիսկալ ընդլայնումը IS ուղիղն աջ է տեղաշարժում: Տնտեսությունը տեղափոխվում է e_2 կետ, որում ապրանքների ու փողի շուկաները հավասարակշռված են, սակայն արտարժույթի շուկան հավասարակշռված չէ: Մասնավորապես՝ վճարային հաշվեկշիռն ավելցուկային է, քանի որ e_2 գտնվում է BP-ից ձախ:

Վճարային հաշվեկշռի ավելցուկն առաջացնում է արժույթի արժևորման ճնշում: Եվ ԿԲ, որը վարում է ֆիքսված փոխարժեքի քաղաքականություն, արժևորումը կանխելու համար պետք է գնի ավելցուկային արտարժույթը (ընդլայնի պաշտոնական պահուստները), ինչը համարժեք է մոնետար ընդլայնմանը:

Գծանկար 17-11:
Ֆիսկալ ընդլայնումը ֆիքսված փոխարժեքի դեպքում, երբ կապիտալն առավել շարժուն է



Այսպիսով՝ ֆիքսված փոխարժեքի և առավել շարժուն կապիտալի դեպքում, երբ կառավարությունն իրականացնում է ֆիսկալ ընդլայնում, ներքին և արտաքին հավասարակշռությունը վերականգնելու համար ԿԲ պետք է իրականացնի մոնետար ընդլայնում:

Արձանագրենք՝ ֆիքսված փոխարժեքի դեպքում ֆիսկալ ընդլայնումը արդյունավետ գործիք է եկամտի մակարդակն ընդլայնելու համար:

Մակրոքաղաքականությունը նկուն փոխարժեքի դեպքում, երբ կապիտալի շարժը կատարյալ չէ

Մոնետար ընդլայնում

Նախորդ բաժնում պարզեցինք, որ ֆիքսված փոխարժեքի դեպքում հայեցողական մոնետար քաղաքականությունն անարդյունավետ է: Ճկուն փոխարժեքի դեպքում, սակայն, մոնետար քաղաքականությունը դրսևորվում է իր ողջ զորությունով:

Գծ. 17-12-ում սկզբնական հավասարակշռությունը e_1 կետում է: Եկամտի մակարդակն ընդլայնելու նպատակով ԿԲ իրականացնում է մոնետար ընդլայնում, որի արդյունքում LM ուղիղը տեղաշարժվում է աջ: Տնտեսությունը տեղաշարժվում է e_2 կետ, որում եկամտի մակարդակը բարձրացել է, իսկ տոկոսադրույքը նվազել է:

Եկամտի աճը և տոկոսադրույքի անկումը անհրաժեշտաբար պայմանավորում են վճարային հաշվեկշռի պակասորդ, ինչից տնտեսությունում ձևավորվում է արժույթի արժեզրկման ճնշում:


Քանի որ ԿԲ վարում է ճկուն փոխարժեքի քաղաքականություն, ապա արժույթի արժեզրկմանը չի խոչընդոտում: Արժեզրկումը տեղի է ունենում, և IS ու BP ուղիղները տեղաշարժվում են աջ: IS-ի աջ տեղաշարժը պայմանավորվում է նաև այն պատճառով, որ տոկոսադրույքի կրճատման հետևանքով ներդրումներն ընդլայնվում են:

Ընդհանուր հավասարակշռությունը վերահաստատվում է e_3 կետում, որում եկամտի մակարդակը բարձրացել է և համապատասխանում է լրիվ զբաղվածության մակարդակին:

Այսպիսով՝ ճկուն փոխարժեքի դեպքում հայեցողական մոնետար քաղաքականությունն արդյունավետ գործիք է՝ եկամտի մակարդակը բարձրացնելու համար: Ընդ որում՝ մոնետար ընդլայնումը պետք է ուղեկցվի արժույթի արժեզրկմամբ:

Դրանով իսկ՝ մոնետար ընդլայնումը և արժույթի արժեզրկումը զուգորդելու միջոցով ԿԲ կարող է վերականգնել ներքին և արտաքին հավասարակշռությունը եկամտի ավելի բարձր մակարդակում:


Գծանկար 17-12:
Մոնետար ընդլայնումը ճկուն փոխարժեքի դեպքում



Ֆիսկալ ընդլայնում, երբ կապիտալը նվազ շարժուն է

Երբ կապիտալը նվազ շարժուն է, ապա կապիտալի հոսքը նվազ առաձգական է տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ և BP ուղիղը LM-ի համեմատ ուղղաձիգ է (գծ. 17-13):

Գծանկար 17-13:
Ֆիսկալ ընդլայնումը ճկուն փոխարժեքի դեպքում, երբ կապիտալը նվազ շարժուն է



Ֆիսկալ ընդլայնման դեպքում IS տեղաշարժվում է աջ, և տնտեսությունը e_1 -ից տեղաշարժվում է e_2 : Եկամուտն ու տոկոսադրույքը բարձրանում են՝ վճարային հաշվեկշռի վրա թողնելով իրարամերժ ազդեցություն: Բայց քանի որ կապիտալը նվազ շարժուն է, ապա կապիտալի բավարար ներհոսք տեղի չի ունենում՝ ընթացիկ հաշվի պակասորդը հակակշռելու համար: Այդ պատճառով վճարային հաշվեկշիռը e_2 կետում պակասորդային է:

Վճարային հաշվեկշռի հավասարակշռման համար անհրաժեշտ է, որ ազգային արժույթն արժեզրկվի: ԿԲ չի խոչընդոտում արժեզրկմանը, և IS ուղիղն ավելի աջ է տեղաշարժվում: Աջ է տեղաշարժվում նաև BP ուղիղը: Արդյունքում՝ տոկոսադրույքի հետագա բարձրացումը և ազգային արժույթի արժեզրկումը չեզոքացնում են վճարային հաշվեկշռի պակասորդը: Տնտեսությունը վերահավասարակշռվում է e_3 կետում, որում եկամտի մակարդակը բարձրացել է:

Այսպիսով, երբ կապիտալը նվազ շարժուն է, ապա ընդհանուր հավասարակշռությունը վերականգնելու համար ֆիսկալ ընդլայնումը պետք է ուղեկցվի ազգային արժույթի արժեզրկմամբ:

Ֆիսկալ ընդլայնում, երբ կապիտալն առավել շարժուն է


Որքան կապիտալը շարժուն է, այնքան կապիտալի հոսքը առաձգական է տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ, և BP ուղիղը հարթ է (գծ.17-12):

Ֆիսկալ ընդլայնման դեպքում IS ուղիղը տեղաշարժվում է աջ: Եկամուտն ու տոկոսադրույքը բարձրանում են՝ վճարային հաշվեկշռի վրա թողնելով իրարամերժ ազդեցություն: Բայց քանի որ կապիտալը առավել շարժուն է, ապա հավասարակշռության նոր e_2 կետում վճարային հաշվեկշիռն ավելցուկային է: Այսինքն՝ տոկոսադրույքի աճի հետևանքով կապիտալի ներհոսքի ընդլայնումը գերազանցել է եկամտի աճի հետևանքով ընթացիկ հաշվի վատացմանը:

Քանի որ վճարային հաշվեկշիռն ավելցուկային է, ապա ազգային արժույթն արժևորվում է, և IS ուղիղը տեղաշարժվում է ձախ՝ IS₂-ից IS₃: Ձախ է տեղաշարժվում նաև BP ուղիղը՝ BP₁-ից BP₂: Վերջին հաշվով՝ տոկոսադրույքի նվազումը և եկամտի կրճատումը չեզոքացնում են վճարային հաշվեկշռի ավելցուկը, և տնտեսությունը դարձյալ հավասարակշռվում է e_3 կետում:

Այսպիսով, երբ կապիտալը շարժուն է, ապա ընդհանուր հավասարակշռությունը վերականգնելու համար ֆիսկալ ընդլայնումը պետք է զուգորդվի արժույթի արժևորմամբ:

Գծանկար 17-14:
Ֆիսկալ ընդլայնումը ճկուն փոխարժեքի դեպքում, երբ կապիտալը առավել շարժուն է



Մակրոքաղաքականությունը, երբ կապիտալի շարժը կատարյալ է

Երբ կապիտալը կատարյալ շարժուն է, փոքր բաց տնտեսությունում տոկոսադրույքը հավասարվում է արտաքին տոկոսադրույքին: Այսպես, եթե ներքին տոկոսադրույքը բարձր է արտաքինից, ապա կապիտալը ներհոսում է այնքան, մինչև տոկոսադրույքները հավասարվեն: Իսկ եթե ներքին տոկոսադրույքը ցածր է արտաքինից, ապա կապիտալն արտահոսում է՝ դարձյալ մինչև տոկոսադրույքները հավասարվեն:

Կապիտալի ներհոսքը նշանակում է, որ օտարերկրացիները գնում են տեղական պարտատոմսերը, որի հետևանքով դրանց գինը բարձրանում է, և հետևաբար՝ տոկոսադրույքը նվազում է: Իսկ կապիտալի արտահոսքը նշանակում է, որ օտարերկրացիները վաճառում են տեղական պարտատոմսերը, որի հետևանքով դրանց գինը նվազում է, իսկ տոկոսադրույքը բարձրանում է:

Երբ կապիտալը կատարյալ շարժուն է, BP ուղիղը կատարյալ առաձգական (հորիզոնական) է:

Ստորև վերլուծում ենք եկամտի (թողարկման) մակարդակը բարձրացնելու նպատակով հայեցողական մոնետար և ֆիսկալ քաղաքականությունների կիրառման նպատակահարմարությունը՝ կախված փոխարժեքի քաղաքականությունից:

Համարում ենք, որ տնտեսությունը սկզբնապես գտնվում է ընդհանուր հավասարակշռության վիճակում, ընդ որում եկամտի մակարդակը ցածր է լրիվ զբաղվածության մակարդակից:

Ֆիքսված փոխարժեք

Մոնետար ընդլայնում


Թողարկումը խթանելու նպատակով ԿԲ կարող է իրականացնել մոնետար ընդլայնում: Այդ դեպքում LM ուղիղը տեղաշարժվում է աջ (գծ. 17-15): Տոկոսադրույքը նվազում է: Կապիտալն արտահոսում է:

Կապիտալի արտահոսքի հետևանքով ձևավորվում է արժույթի արժեզրկման ճնշում, ինչը զսպելու համար ԿԲ հարկադրված է արտարժույթային ներխուժում իրականացնել: Իսկ դրա հետևանքով փողի առաջարկը նվազում է, ու LM տեղաշարժվում է հետ, ձախ:

Դարձյալ արձանագրում ենք, որ երբ փոխարժեքը ֆիքսված է, ապա հայեցողական մոնետար քաղաքականությունն անարդյունավետ գործիք է: Իհարկե՝ ԿԲ կարող է ստերիլացնել արտարժույթային ներխուժումը, բայց այդ դեպքում արժույթի արժեզրկման ճնշումը կպահպանվի: Իսկ արտարժույթային ներխուժումներ կատարելու ԿԲ-ի կարողությունը սահմանափակված է իր միջազգային պահուստների մեծությամբ:

Գծանկար 17-15:

Մոնետար ընդլայնումը ֆիքսված փոխարժեքի դեպքում, երբ կապիտալը կատարյալ շարժուն է




Նշենք, որ որքան կապիտալի շարժն կատարյալ է, այսինքն՝ որքան ներքին և արտաքին ֆինանսական շուկաները ինտեգրված են, այնքան ԿԲ-ի հայեցողական մոնետար քաղաքականություն իրագործելու կարողությունը փոքր է: Տվյալ դեպքում, քանի որ կապիտալի շարժը կատարյալ է, ապա մոնետար ընդլայնման դեպքում արժեզրկման ճնշումը (արժույթից փախուստը) այնքան արագ և այնքան զորեղ է դրսևորվում, որ հայեցողական մոնետար քաղաքականությունը գործնականում անիրագործելի է:

Վերջինը հենց անուրբ կամ անհամատեղելի երրորդության դրսևորումն է: Հիշենք, որ երբ (1) կապիտալի հոսքը կատարյալ է, ապա երկիրը չի կարող միաժամանակ (2) ֆիքսել փոխարժեքը և (3) վարել հայեցողական մոնետար քաղաքականություն:

Ֆիսկալ ընդլայնում

Երբ կառավարությունը եկամտի մակարդակը բարձրացնելու նպատակով իրականացնում է ֆիսկալ ընդլայնում, ապա IS ուղիղը տեղաշարժվում է աջ (գծ. 17-16), և տոկոսադրույքը բարձրանում է: Տոկոսադրույքի աճից կապիտալը ներհոսում է, ինչը պայմանավորում է արժույթի արժևորման ճնշում:

Գծանկար 17-16:
Ֆիսկալ ընդլայնումը ֆիքսված փոխարժեքի դեպքում, երբ կապիտալը կատարյալ շարժուն է



Արժույթի արժևորումը կանխելու համար ԿԲ գնում է ավելցուկային արտարժույթը, որի հետևանքով փողի առաջարկը մեծանում է, և LM ուղիղը տեղաշարժվում է աջ:

Նոր հավասարակշռությունը հաստատվում է e_2 կետում, որում եկամտի մակարդակը բարձրացել է, իսկ տոկոսադրույքը վերադարձել է նախկին մակարդակին:

Այսպիսով՝ ֆիքսված փոխարժեքի դեպքում, երբ կապիտալը կատարյալ շարժուն է, հայեցողական ֆիսկալ քաղաքականությունը կարճատև ժամանակաշրջանում եկամտի մակարդակը բարձրացնելու գերարդյունավետ գործիք է: Այդ գերարդյունավետությունը պայմանավորված է նրանով, որ ֆիսկալ ընդլայնումը անմիջապես հրահրում է մոնետար ընդլայնում, իսկ այդ երկուսի զուգորդումը տնտեսությանը աճի նշանակալի ազդակ է հաղորդում:

Ճկուն փոխարժեք

Բուրբուրվին այլ է մակրոտնտեսական քաղաքականության ազդեցությունը ճկուն փոխարժեքի դեպքում:


Մոնետար ընդլայնում

Կենտրոնական բանկը եկամտի մակարդակը բարձրացնելու նպատակով որոշում է իրականացնել մոնետար ընդլայնում:

Մոնետար ընդլայնումից LM ուղիղը տեղաշարժվում է աջ (գծ. 17-17), ինչից տոկոսադրույքը նվազում է r_1 -ից r_2 , իսկ եկամտի մակարդակը բարձրանում է Y_1 -ից Y_2 : Եկամտի աճը պայմանավորում է ներմուծման աճ, իսկ տոկոսադրույքի անկումը պայմանավորում է ներդրումների ընդլայնում և ազգային արժույթի արժեզրկում: Ընդ որում՝ ԿԲ-ն արժեզրկմանը չի խոչընդոտում, քանի որ վարում է ճկուն փոխարժեքի քաղաքականություն:

Գծանկար 17-17:

Մոնետար ընդլայնումը ճկուն փոխարժեքի դեպքում, երբ կապիտալը կատարյալ շարժուն է



Արժեզրկումը հետևանք է նրա, որ տոկոսադրույքի նվազման պատճառով կապիտալն արտահոսում է, և տեղական պարտատոմսերի, ու հետևաբար՝ արժույթի նկատմամբ զուտ պահանջարկը կրճատվում են: Ընդ որում՝ կապիտալի արտահոսքի և ներմուծման աճի պատճառով վճարային հաշվեկշիռը դառնում է պակասորդային:

Սակայն ներդրումների աճի ու արժեզրկման շնորհիվ IS ուղիղը տեղաշարժվում է աջ (համարում ենք՝ ՄԼՌ պայմանը տեղի ունի), և ընդհանուր հավասարակշռությունը վերականգնվում է e_2 կետում, որում եկամտի մակարդակը համապատասխանում է լրիվ զբաղվածությանը, իսկ տոկոսադրույքը վերադարձել է նախկին մակարդակին:

Այսպիսով՝ երբ փոխարժեքը ճկուն է, ապա մոնետար ընդլայնումն արդյունավետ գործիք է եկամտի (թողարկման) մակարդակը բարձրացնելու համար:

Ֆիսկալ ընդլայնում

Երբ կառավարությունը կարճատև ժամանակաշրջանում ձգտում է ընդլայնել եկամտի մակարդակը, ապա կարող է իրականացնել ֆիսկալ ընդլայնում: Այդ դեպքում IS ուղիղը տեղաշարժվում է աջ (գծ. 17-18), և տոկոսադրույքը բարձրանում է:

Տոկոսադրույքի աճը բացասաբար է ազդում ներդրումների վրա, և հետևաբար մասամբ չեզոքացնում է ֆիսկալ ընդլայնման բարերար ազդեցությունը (դուրս մղման էֆեկտ):

Ավելին, քանի որ կապիտալը կատարյալ շարժուն է, ապա տոկոսադրույքի աճը բերում է կապիտալի ներհոսքին, ինչը պայմանավորում է արժույթի արժևորում: Արժևորումն արտահանումը դարձնում է նվազ մրցունակ, և զուտ արտահանումը կրճատվում է:


Ներդրումների և զուտ արտահանման կրճատման արդյունքում IS ուղիղը դարձյալ հետ, ձախ է տեղաշարժվում:

Ուստի՝ ճկուն փոխարժեքի դեպքում, երբ կապիտալը կատարյալ շարժուն է, ֆիսկալ քաղաքականությունն անարդյունավետ է:

Այստեղ տեղին է հետևյալ կարևոր նկատառումը: Ֆիսկալ ընդլայնումը նկարագրված իրավիճակում անարդյունավետ է, քանի որ եկամտի աճ տեղի չի ունենում: Բայց այն խիստ «արդյունավետ» է կառավարության գնումների հասցեատերերի համար: Երբ կառավարությունն ընդլայնում է ծախսերը, ինչն արժևորման պատճառով ուղեկցվում է զուտ արտահանման կրճատմամբ, ապա կառավարության ծախսերի հասցեատերերը շահում են, իսկ արտահանող ճյուղերը տուժում են: Այսինքն՝ թեպետ եկամուտը չի ընդլայնվում, բայց առկա եկամուտը վերաբաշխվում է:

Գծանկար 17-18:

Ֆիսկալ ընդլայնումը ճկուն փոխարժեքի դեպքում, երբ կապիտալը կատարյալ շարժուն է



Ամփոփելով նշենք՝ փոքր բաց տնտեսությունում, երբ կապիտալի շարժը կատարյալ է, ֆիքսված փոխարժեքի դեպքում արդյունավետ է ֆիսկալ քաղաքականությունը, իսկ ճկուն փոխարժեքի դեպքում արդյունավետ է մոնետար քաղաքականությունը: Այս եզրահանգումը միջազգային տնտեսագիտության առավել ուշագրավ արդյունքներից է:

Տերմիններ

Հալեցողական քաղաքականություն, (discretionary policy), եկամուտը (թողարկումը) փոփոխելու նպատակով մոնետար կամ ֆիսկալ քաղաքականության գործիքների կիրառումը:

Միջազգային պահուստներ, (official reserves), կենտրոնական բանկի կողմից տնօրինվող բարձր իրացվելի ակտիվներ (արտարժույթ և դրանով գնանշված արժեթղթեր, ինչպես նաև ոսկի), որոնք կարող են կԲ-ի կողմից օգտագործվել արտարժույթի շուկայում ներխուժումների նպատակով:

Ներքին կլանում, (domestic absorption), ապրանքների ու ծառայությունների վրա մասնավոր սպառման, ներդրումների և կառավարության գնումների նպատակով կատարված բոլոր ծախսերը: Ներառում է ներմուծումը, բայց չի ներառում արտահանումը:

Գրականություն

- Fleming, J. M. (1962). Domestic Financial Policies under Fixed and under Floating Exchange Rates. *IMF Staff Papers*, 9(3), 369-380.
- Keynes, J. M. (1936). The general theory of interest, employment and money: London: Macmillan.
- Modigliani, F. (1944). Liquidity preference and the theory of interest and money. *Econometrica, Journal of the Econometric Society*, 45-88.
- Mundell, R. A. (1962). The appropriate use of monetary and fiscal policy under fixed exchange rates. *IMF Staff Papers*, 9(1), 70-79.
- Mundell, R. A. (1963). Capital mobility and stabilization policy under fixed and flexible exchange rates. *Canadian Journal of Economics and Political Science/Revue canadienne de economiques et science politique*, 29(04), 475-485.